ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«ԱԳԱՍՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Մուրադյան,

Ի պատասխան 2024թ. մարտի 20-ի Ձեր կողմից ներկայացված գրության՝ հայտնում եմ Ձեզ, որ մեր կողմից ուղարկված ծանուցումն իրենից ներկայացնում է տնօրենի կողմից պատճառաբանված որոշում, այն առումով, որ իր մեջ պարունակում է այն բոլոր փաստական և իրավական հիմնավորումները, որոնց հիման վրա միակողմանի լուծվել է «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5» ծածկագրով պայմանագիրը՝ համաձայն պայմանագրի 2.1.1 և 2.1.7.1 (բ) կետերի:

Առդիր՝ 1 նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ ՍԵՓՈՒՀ ՆԱԶԻՆՅԱՆ

կատարող՝
գնումների համակարգող՝ Ս. Ոփյան
Հեռ.՝ 012272727

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Աճառյան 2 նրբ. 2 շենք
Հեռ.՝ (+ 374 12) 27 27 27 էլ. փոստ՝ addictions.arm@gmail.com

«Ագաստ» ՍՊԸ-ի տնօրեն

Տիկին Գ. Մուրադյանին

Ծանուցում

Հարգելի՛ տիկին Մուրադյան,

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ -ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 2024թ. փետրվարի 2-ին կնքված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) շրջանակներում «Ագաստ» ՍՊԸ-ն խախտել է կողմերի միջև կնքված Պայմանագրի 2.1.1 կետով սահմանված պահանջը՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, 2.1.7.1 (բ) կետով սահմանված պահանջը՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7 կետը՝ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 2024թ. փետրվարի 23-ին միակողմանի լուծել է ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ -ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 2024թ. փետրվարի 2-ին կնքված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5» ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասին 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը հրավերով և պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարը:

Հրավերի 8.14 կետի համաձայն՝ լիազոր մարմին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ, եթե մասնակիցը կամ Պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազոր մարմին:

Միաժամանակ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ձեր կազմակերպության կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները և կից պահանջագրերը կներկայացվի նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին և բանկի կողմից վճարումն ամբողջությամբ ապահովելու դեպքում ևս պատվիրատուն տվյալ մասնակցին ցանկում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազոր մարմին:

Հայտնում եմ նաև, որը նշված գործողությունների՝ վճարումների չիրականացման դեպքում պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարության (ծանուցումը) հրապարակվելու օրվան հաջորդող տասներորդ օրը, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազոր մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում՝ որոշումն ստանալու հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

ՏՆՕՐԵՆ՝ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ